

հարիւրն ալ ձեռքէն կը հանէ : Ղերմակ մօրուքը բաւական պատճառ կը սեպէ՝ որ ուրիշները իր ամէն խօսքին մէն . բայց չմտածեր որ մարդուս ձերմակ մօրուք՝ խմստուութիւնն է կ'ըսէ սուրբ գիրքը :

Որչափ բաղձալի բան է մէկ խօսեմ ու բարեկիրթ ծեր մը ունենալ տանը զարդ ու օրհնութիւն , որ բոլոր ընտանիքը իրմէ պատկառին ու զինքը սիրեն , իսկ ինքը հիւրի մը պէս կենալով տանը

մէջ , իր անդիւտ կատարելութեամբ՝ որ է փորձաւութիւնը , կըցածին չափ օգնէ իր ընտանեացը , ու իրենց ուրախութիւն ըլլայ քանի որ կենդանի է , ու մահուանը ատենը անոնց աչքին արցունքը իր առաքինութեանցը անտառակուտելի վկայ ըլլան , այնչափ ծանր է մէկ դժուարաբարոյ ծեր մը , որուն ընտանիքը որչափ ալ բարեպաշտ ըլլան՝ իրեն մեռնելէն վերջը կը զգան որ մէկ ծանրութիւն մը պակսեր է տնէն :

\*

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

### ԲԱՆԱՍ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

#### ՄԱՍԻՐԱԿԱՆ ՍԱՐԵՐՆ

ԼՂԱԳ Սասեաց սարն ելեր բարձրացեր  
 Յամպերն 'ի վայր ձայն ահեղ կու ածէր .  
 Ինձ մրտիկ արէք հաւսար դուք լերունք ,  
 Եւ բարձր եմ քանց ձեզ , ճակատս 'ի յաստղունք .  
 Եւ Լրարատեանն եմ ԼՂադ Սասիս  
 ԼՂնիւ քան զամէն լերունք աշխարհիս .  
 Լստուած զիս չափեց , ԼՂամ նախ տեսաւ ,  
 Տապանն հիւր երեկ ինձ , Լոյ յիս իջաւ .  
 Հայկն ալ յիս դարձաւ փառօք յաղթական .  
 Օիս Լմասիայն կնքեց ու ԼՂայն .  
 Տիգրանն ինձ գերի բերաւ զԼՂահաճակ  
 Հայոց թշնամեաց բանտ եմ դժնդակ .  
 Լրտաւազդն 'ի խոր յիմ քարայրս 'ի ներս  
 ԼՂաարհի սպառնայ տալ թունդ ու աւեր :  
 Յիմ կողէս իջուց Տրդատ մեծազօր  
 Սուրբ ԼՂմիածնայ հիմունքն ահաւոր :  
 Օիս բոլոր պատեն անուանք և փառք հին  
 Բաջաց դիւցազանց Հայոց աշխարհին .  
 Եւ միշտ եմ պարծանք Հայոցըս մեծաց  
 Լոբա այլ պարծանք են ինձ անմուաց :  
 Լերինք և բարձունք ահա տեսէք զիս ,  
 Եւ ձեր թաղաւորն եմ ԼՂադ Սասիս :

Փոքր Սասիսն աւեր .

Եւ քո հարազատն եմ ԼՂադ եղբայր ,  
 Փառաց պարծանացդ հաղորդ հաւատար .  
 Ղու բարձր ես քան զիս քանց լերունքն ամէն ,  
 Բզբեզ չէ կոխել՝ բայց հրաթև սրբէն .

Վո պարծանքն են հին՝ հաւսար արեւու  
 Որ քեզ կ'ողջունէ նախ ամէն առտու :  
 Բայց մի շատ գոռար դու յամպերտ 'ի վայր  
 Թէ կու ճանաչես զիս քո փոքր եղբայր .  
 Չընի որ լերունքն ու բարձունքն ամէն  
 Ի քեզ շուրջ հային ու տրնազ՝ անեն .  
 Չընի որ ասեն , թէ մի այլ պարծիր ,  
 Օր հիմի փոխուել է հայոց երկիր .  
 Թէ փառք թէ պարծանք անցել են գնացել  
 Վո բարձրը գլխէս 'ի վայր են սահել ,  
 Եւման աղբերացդ այդ ու գետերուդ  
 Որ կողերտ 'ի վայր իջնուն գունդագունդ ,  
 Դաշտեր ու ձորեր անցնին ու երթան՝  
 Ու մեծ ծովն 'ի մայր թափին յաւիտեան :

#### Լ՛ազ Սասիս ասէր .

ԿՈՒ գնան կու թափին , կու մընան անանց .  
 Լ՛իք կու գնան , գան ալիք յետւանց :  
 Լ՛ազ Սասիս բարձր , աղբիւրն անըսպառ  
 Փառք ու պարծանքն այլ երթայ դարէ դար :

#### Փոքր Սասիս ասէր .

ԸՆԻՐ քո փառքն այլ նրման գետերուդ  
 Որ հետ կու երթան հետ գան շուտ ու շուտ :  
 Եւ ես այլ Սասիս , ես այլ սար քաջաց ,  
 Երբեմն էի ես այլ տեղ պարծանաց .  
 Շատ փառք ունէանք , հիմի ինչ ունինք .  
 Լ՛ազ , լուկ ամօթ , միայն նախատինք :  
 Չեմ չեմ այլ փառաց ու բաղդի նըշան ,  
 Եւ մեռելութեան հայոց մահարձան .  
 Կու գնան կու դառնան ալիք գետերուն ,  
 Չիդառնար որդւոց՝ պարծանք հայրերուն .  
 Սիւնի կու հալէն անցեալ ամառներ  
 Օայս մեր ձըմերանս ահագին սառներ .  
 Պահ մի կու զարնէ արեւուն փայլակ  
 Դարձեալ կու թողու ցուրտ , դարձեալ սեւակ :

#### Լ՛ազ Սասիս ասէր .

Ս՛այդպէս ասէր Սարուկ մի այդպէս ,  
 Սիւնի քան զԼ՛ազ դու լու կու տեսնես .  
 Եւ իրք կու տեսնեմ քանց քեզ առաւել ,  
 Յերեսէն հայոց փայլն չէ կտրել :

## Փոքր Սասիսն ասէր .

ԲԱՐՁՐԷՆ կու նայիս՝ բարձրը կու տեսնես ,  
 Գլըւխդ 'ի յարե՝ զամէնք լոյս կարծես .  
 Յաժիր ինձ նրման , քիչ մ'այլ խոր նայէ ,  
 Վո դուրսըն ձիւն , ներսըն պաղուկ քար է .  
 Տազար գարունք դան , թէ հազար արե  
 Ի ներս չեն մտնուր , անցնին քո վերե .  
 Լյապէս սառնեղէն իրք մի զհայք պատեր ,  
 Յուրտն այլ վախեմ՝ շատ 'ի խորն է մըտեր :

## Լազ Սասիսն ասէր .

Ու խոր կու նայի՝ թող պինդ խոր մտնու .  
 Ի ուկ կեղե տեսնել՝ չէ սուր աչերու .  
 Դու քիչ մ'այլ իջիր , քրչիկ մ'այլ մըտիր  
 Ու եկ իմ խորունկ ծոցուս մօտեցիր .  
 Տանց՝ տեսնուս ահեղ կրակներ ու հնոցներ  
 Որ վախուղ հալիս , գաս դաշտի ընկեր .  
 Լէ մէյմ'աչէ՝ զայս վիհս ահագին՝  
 Որ յատակն յանդունդ հասանէ երկրին .  
 Իերանըն ձիւնով սառով կու ծածկի ,  
 Իերսըն դրժոխոց քութուկ բորբոքի .  
 Գիտես թէ մարած է զինչ հին կանթեղ ,  
 Բայց թէ տամ քրչիկ մի քուքուրտի՝ դեղ ,  
 Յանկրսկած դաշտերտ ամէն 'ի ման գայ ,  
 Դու այլ հետ լերանց դողաս զինչ տըղայ .  
 Լնգուման զերկրիս սիրտն 'ի վեր բերեմ  
 Բզմուխն ու զմոխիր 'ի սարերտ հանեմ .  
 Սկ պատեմ զերկիր , ու սև զամպերն այլ ,  
 Դուխ ու բոց անեմ , կարկըտամ փայլ փայլ .  
 Թէ ուզենամ նա՝ զսարերը շարժեմ  
 ՅԱրայի դաշտէն 'ի դուրս վըռնտեմ ,  
 Թէ ուզենամ՝ նոր կանգնեմ ես սարեր .  
 ՅԱրագած դեսպան զրկեմ բարկ քարեր ,  
 Տրեղէն գետ մ'այլ հետ կու ածեմ վազան ,  
 Վայ որ դէմ կանգնի , լափեմ զինչ գազան :  
 Տանց գիտցիր զԼազ Սասիսն ուլ եղբայր .  
 Տանց ցրտիկ ծոցեր՝ ունին սիրտ հրավառ .  
 Սասեր թէ դոքա մեռած են մարած ,  
 Զանցնիր ճրագն որ ինքն է վառել Լստուած :

## Փոքր Սասիսն ասէր .

ՈՒՍԵԼ է վառել , բայց մի բարկանար  
 Թէ բանիկս ասեմ , Լազ իմ եղբայր ,

1 Այնպէս :

2 Ծոցումը . փոփոքր :

Բայց որ կու վառէ՝ նա այլ կու մարէ .  
 Կեանք տայ ու կ'առնու , ասաց մարգարէ .  
 Չընի որ Հայոց արևն այլ անցել՝  
 Սեզ արևմըտքին լուսիկն է մնացել :

Բա՛գ Սասիան ասէր .

ԸՍՏՈՒԱԾ մահ չարար , կ'ասէ Խմաստուն ,  
 Ինքն մեռելոց այլ տայ յարութիւն .  
 Վարէն կ'ենէ կայծ , ու կայծէն կայծակ ,  
 Ինտառ կ'այրէ այն՝ որ կայր մոխրի տակ .  
 Սըտած արև՝ նոր լուսով դայ յառտուն ,  
 Սովիկն այլ մարած՝ օր տայ գիշերուն :  
 Թէ ցուրտ թէ մարած ասես զՀայաստան ,  
 Վայ ժամ որ վառի , կենաց տայ նըշան :

Փոքր Սասիան ասէր .

ԵՍ կու վախենամ յայն սև անիծից  
 Որ մեր հայրապետքն են տըւեր կըսկիծ .  
 Երեսնք ու Սովսէսք Հայոց սև օրեր  
 Եսցել են դալիս , Հայոց շատ երեր :

Բա՛գ Սասիան ասէր .

ԵՊՊՔՆ այլ փարատին , մըրիկն այլ դադրի ,  
 Իսկի անփոփոխ չէ բաղդ աշխարհի .  
 Օ որ Եստուած կ'օրհնէ՝ մարդ չի անիծեր .  
 Օ անէծքն առին լոկ ու կ'առնուն չարեր :  
 Հայք մոռցան զԵստուած ու մոռցան զիրար ,  
 Իհնզ հովերու եղան դիրուտար՝ .  
 Երբ յիշեն զԵստուած , զիրար այլ յիշեն  
 Սիբեանութիւն ու սէր մէջ քաշեն ,  
 Թողուն խարդախանք ու զանձնասէր շահ ,  
 Ինին իրարու օգնող ու վստահ ,  
 Հանեն չար մէկում՝ այլ , ուզեն բարին ,  
 Սիրով համբերեն , յուսով աշխատին .  
 Հայնժամ ասա՛ փոքր եղբայր , ո՞նց՝ թրւի ,  
 Ինի թէ Հայոց ճրագիկն այլ վառի :

Փոքր Սասիան ասէր .

ԻՆՆԻ թէ այդպէս անէ ազգն Հայոց՝  
 Եւ կու հաւատամ թ' իւրեան վառի բոց .  
 Կու հաւատամ՝ երբ սիրտք զան՝ ի բարին  
 Ի մեզ այլ դառնայ մեր պարծանքն հին :

1 Ցիրուցան :

2 Ի՞նչպէս կ'երևնայ . Ի՞նչ կարծես :

ԼՂԼԵՐԵ տի ընի որ վառին սրտեր ,  
ԵՐԲԵ տի տեսնունք զայն երջանիկ օրեր :

#### Լ-ԽԳ Սասիսն ասէր .

Ինչ միտիկ արէք լերունքրտ հաւսար ,  
Հանց գիտացիր դու այլ իմ փոքր եղբայր .  
Երբ յետ դարերու առաջին անգամ  
Եւ Լազ Սասիս ներսուց որոտամ ,  
Կանչեմ ու չնչեմ , արձակեմ ծուխ բոց  
Սասանեցրնեմ զՂրարատն Հայոց ,  
Լյս ընի նըշան Հայոց աշխարհին՝  
Ի՞նչ զայ ժամանակ որ դան փառքն այլ հին .  
Բայց միայն սիրով , հանդարտ ու խելօք  
Ձանք դրնեն բարւոյն ու չընին անհոգ :

#### Փոքր Սասիսն ասէր .

ԵԱՅԷՔ մեզ վրկայ լերունքրտ հաւսար ,  
Սեծ խոստմունք երես ձեզ Սասիսուն սար ,  
Երբ շարժի Լազ , չնչե ծուխ ու բոց՝  
Երշան է բարւոյ աշխարհին Հայոց :

#### Լ-ԽԿ ու Փոքր Սասիսն ասացին .

ԻԱՅՅ միայն սիրով հանդարտ ու խելօք  
Ձանք դրնեն բարւոյն ու չընին անհոգ :

#### Լաւապետն այլ ասաց .

ԵԱՐԺԻՐ հա շարժիր Լազըդ Սասիս ,  
Երձան սարժանաց Հայոց աշխարհիս .  
Շնչէ հա չնչէ ծրխիկ ծիրանի  
Ո՞րքո մանկըտեացըդ նըշան ընի : . . .  
ԵՏա շարժեցաւ Լազըն Սասիս  
Երձան սարժանաց Հայոց աշխարհիս .  
ԵՏա շարժեցան դաշտք Երարատայ .  
Դուք այլ շարժեցէք մանկըտիք Հայկայ :  
ԵՏա չնչեցաւ ծուխըն ծիրանի .  
Դուք այլ չնչեցէք հոգի հայկազնի :  
Բայց միայն սիրով , հանդարտ ու խելօք  
Ձանք դրնէք բարւոյն ու չընիք անհոգ :  
Եարժիր ա՛հ շարժիր դուն այլ Լաւապետ  
Սասեաց սարերուն չնչիկն առ մէկ հետ :  
ԵՏա շարժեցաւ ծեր Լաւապետն այլ .  
Ո՞վ դէպ 'ի Սասիս իւր հետ կ'առնու քայլ :